Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 360

*ներքական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Օշական բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Օշական բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օշական բնակավայր<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-113-0227-0081 կադաստրային ծածկագրով 0.1335 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 02-113-0227-0081 կադաստրային ծածկագրով 0.1335 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Օշական բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա. Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «20» «հոկտեմբերի» 2023թ.